Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք, քեռուս տունը տեղափոխելուց յետոյ: Դաշտերը ստանում էին տխուր եւ գունաթափ կերպարանք. կանաչ մարգագետինները, օրըստօրէ դեղնելով, մեռելային դէմք էին կրում: Անխղճաբար փչում էր սառը քամին եւ թափում էր մերկ ծառերի մնացած տերեւները: Երկնքի խոժոռ եւ մոխրագոյն դէմքի վրայ գլորւում էին մթին ամպերի ահագին բեկորներ եւ արգելում էին արեւի թոյլ ճառագայթները: Խիստ տխուր եղանակով լսելի էր լինում կռունկների խուլ կռնչիւնը, որոնք բարձր եթերքի միջով, եռանկիւնի շարքերով, դիմում էին դէպի օտար աշխարհ: Ծիծեռնակներ ամենեւին չէին երեւում. նրանք վաղուց էին գաղթել: Միայն մրջիւնները խիստ եռանդով կրում էին դէպի իրանց ամբարները ընդեղէնների զանազան տեսակներ: Ամէն արարած պատրաստւում է ընդունել ձմեռը — իր անախորժ հիւրը:

Այս օրերը սակաւ հոգսեր չպատճառեցին մօրս: Ձմեռը, աղքատների թշնամին, մեզ պատժելու համար էր գալիս:

Մայրս իր հօր տունը տեղափոխելուց մի քանի օրից յետոյ հրաժարուեցաւ կերակուրներ ընդունել նրանց սեղանից եւ ապրում էր իր անկախ աշխատանքով: Նա շուտով հաշտուեցաւ իր նոր վիճակի հետ, չկամենալով ծանրութիւն պատճառել իր եղբայրներին, որոնց շատ հաճելի չէր իրանց գերդաստանի վրայ ընդունած նոր բեռը: Մայրս աղքատութիւն շատ էր կրած, բայց երբեք իր տան չքաւորութիւնը օտարներին յայտնած չէր, թէ ինչպէս է ապրում, կամ ինչ միջոցներով է պահում իր երեխաներին: Նա բաւական հպարտ կին էր: Նա ամէն յոյս դրած էր իր աշխատող ձեռքերի եւ աստծոյ վրայ: Բայց աստուած շատ անգամ թոյլ է տալիս, որ դժբախտութիւնը մինչեւ վերջին ծայր տանջէ մարդուն: Այդ անում է նա, որպէս ասում են, արարածների համբերութիւնը փորձելու համար: Մօրս համբերութիւնը երկաթի ամրութիւն ունէր: Բայց երկաթն էլ փշրւում է, երկաթն էլ խորտակւում է...

Ես երբեք չեմ կարող մոռանալ մօրս արտասուալի աչքերը, երբ առաջին անգամ, ինձ եւ երկու քոյրերիս իր հետ առնելով, գնացինք դաշտը, հնձած արտերից թափուած հասկերը հաւաքելու: Դա մուրացկանութեան առաջին քայլն է, որին ենթարկւում է պատուաւոր աղքատը: Մենք մի ժամանակ արտեր ունէինք, հունձք ունէինք, եւ մեր հունձը հաւաքելուց յետոյ խուրձերից ընկած հասկերը թողնում էինք աստուծու աղքատներին եւ երկնքի թռչուններին: Բոլորը՝ կորցրինք, եւ այժմ ստիպուած էինք ուրիշի արտերից հասկաքաղ1 անել.... Արտերի կարճ խուզած տափարակի վրայ, մխաթների նման վեր ցցուած ձողերի սուր ծայրերը ծակծկում էին իմ եւ քոյրերիս